ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԷԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՅՈՒՐԵՐՆ ԷԻՆ ՄԱՐՏՈՒՆԵՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Սույն թվականի հունվարի 2-ը ընդմիշտ կմնա Մարտունու «Վանեվան» համալսարանի ուսանողության ու քաղաքի «Երիտասարդական ակադեմիա» հասարակական կազմակերպության անդամների հիշողության մեջ: Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իր նստավայրում Մարտունուց ժամանած պատանիների ու աղջիկների խմբին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաքաջյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության անդամներին՝ հատկապես նշելով թեմում հոգևոր կյանքի աշխուժացման գործում Մարտունու «Վանեվան» համալսարանի և «Երիտասարդական ակադեմիա» կազմակերպության ձեռնարկումներն ու ներդրած ջանքերը:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների ուրախ առիթով շնորհավորելով, ինչպես նաև իր հայրական օրհնանքը բաշխելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը պատվիրեց երիտասարդությանը լինել բարի և աշխատասեր, հույսը դնել միայն սեփական ուժերի ու հնարավորությունների վրա՝ նշելով, որ հայրենիքը մերն է, և մենք պետք է շենացնենք ու բարգավաճ դարձնենք այն:

Նորին Սրբությունը, ի հաստատումն ասածների, դրվագներ պատմեց իր ուսումնառությունից, մանկավարժական ու հոգևոր գործունեությունից՝ շարունակ ընդգծելով խոր գիտելիքներ ձեռք բերելու կարևորությունը:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը նրանց նվիրեց Մայր Աթոռի հրատարակած, ինչպես նաև իր հեղինակած գրքերից՝ խոստանալով այցելել Գեղարքունյաց թեմ և նրանց հետ հաջորդ անգամ հանդիպել իրենց հայրենի քաղաքում՝ հույս ունենալով կատարված տեսնել իր տված հայրապետական պատգամները:

Հյուրերը Ամենայն Հայոց Հայրապետին նվիրեցին Սևանա լիճը պատկերող մի կտավ և, որպես գեղեցիկ ու անմոռանալի հուշ, լուսանկարվեցին Նորին Սրբության հետ:

ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հունվարի 10-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Շիրակի թեմի նորաստեղծ խորհրդի և եկեղեցական դասի անդամներին՝ թեմական առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանի գլխավորությամբ:

Գրիգորիս արք. Բունիաթյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց թեմական նորաստեղծ խորհրդի անդամներին, ապա ներկայացրեց խորհրդի կողմից մշակված աշխատանքային ծրագրերը: Սրբազան հայրը մասնավորապես նշեց, որ շուտով տեղերում ևս ստեղծվելու են համապատասխան ճխական խորհուրդներ, որոնք մեծապես կնպաստեն, որպեսզի մարդիկ ավելի մոտենան եկեղեցուն, առավել հզորանա հավատքը նրանց մեջ:

Վեհափառ Հայրապետը մեծ ուրախությամբ ողջունեց թեմական խորհրդի ծնունդը և հաջողություններ մաղթեց նրա ձեռնարկներին՝ նշելով, որ Մայր Աթոռը անհրաժեշտ օգնություն և աջակցություն կցուցաբերի՝ թեմի աշխատանքները ճիշտ կազմակերպելու գործում: Նորին Սրբությունը ընդգծեց նաև, որ թեմական խորհուրդների ստեղծումով ժողովրդի մեջ կաշխուժանա հետաքրքրությունը դեպի հոգևոր կյանքը, դեպի Հայաստանյայց Ս. Եկեղեցին և Էլ ավելի գործուն կդառնա կապը թեմերի և Մայր Աթոռի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿՐԾՔԱՆՇԱՆԸ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հունվարի 16-ին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելեցին Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպության (ՀԱՍԿ) կենտրոնական վարչության անդամները՝ ատենապետ Հարություն Հարությունյանի գլխավորությամբ: Նրանք Վեհափառ Հայրապետին հանձնեցին ՀԱՍԿ-ի կենտրոնական վարչության կողմից սահմանված ամենամյա Ոսկե կրծքանշանը: Խորհրդանշական իմաստ ուներ անդրանիկ Ոսկե կրծքանշանի հանձնումը Գարեգին Ա Վեհափառին, սկաուտական կազմակերպության երբեմնի անդամին:

Նորին Սրբությունը մեծ հուզումով ընդունեց նվերը՝ իր հայրապետական օրհնությունը տալով նրանց:

Ապա ատենապետ Հարություն Հարությունյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց կազմակերպության գործունեությանը և անելիքներին:

Հանդիպմանը ներկա էր Ազգային Ժողովի Գիտության, կրթության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արամ Մանուկյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ